ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սիրելի Վեհափառ Տեր,

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդը, բոլոր աշխատակիցները և անձամբ ես սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան հիսունամյակի կապակցությամբ:

Ձեր կյանքի անցնող այս հիսուն տարիների կեսից ավելին սերտորեն կապված է եղել նաև Մաշտոցյան Մատենադարանի հետ, ուր Դուք նախ որպես Գևորգյան Ճեմարանի սան եք այցելել և հաղորդվել մեր ազգային-հոգևոր բազմադարյան արժեքներին: Այնուհետև Ձեր հոգևոր սպասավորության ու եկեղեցական ձեռնադրության աստիճաններով վեր բարձրանալիս և հատկապես Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության շրջանում Ձեր այս կապվածությունն արտահայտվել են մատենադարանանպաստ տարբեր ձեռնարկումներով:

Հայոց Հայրապետական Աթոռի գահակալ ընտրվելուց հետո Ձեր այս վերաբերմունքն արդեն վերածվեց հայրապետական հոգածության:

Բրիտանական թանգարանի և միջազգային ու համաշխարհային ճանաչում ունեցող մյուս հաստատությունների նման Մատենադարանը ևս ստեղծեց իր «Բարեկամների միություն»-ը՝ ակնկալելով համայն հայության, ինչպես նաև տարբեր երկրների այն անձանց ու կազմակերպությունների օժանդակությունը, ովքեր ցանկանում են իրենց նպաստը բերել հայկական ձեռագրերի ուսումնասիրությանը և անխաթար պահպանությանը:

Ուրախությամբ պետք է ասենք, որ «Մատենադարանի Բարեկամների Միության» պատվավոր նախագահն եք Դուք, և լիահույս ենք, որ Ձեր բոլորանվեր աջակցությունն եք բերելու և Ձեր բարձր հեղինակությամբ նպաստելու եք Մաշտոցյան Մատենադարանին ծառայող այս հիմնադրամի կայացմանը:

Մատենադարանը, որպես Ս. Էջմիածնի հոգեհարազատ զավակ, մեր բազմադարյան հոգևոր մշակույթի, ձեռագիր մատյանների պահպանության, ուսումնասիր-

ման և հրապարակման գործը սպանձնած համազգային կենտրոն, լիահույս է, որ Ձեր գահակալության տարիներին ավելի կամրապնդվեն և կսերտանան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մաշտոցյան Մատենադարանի գիտական, գործնական և հոգևոր կապերը, մի համագործակցություն, որի հիմքերը դրել են Ձեր անմիջական նախորդներ երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Կաթողիկոսները:

Ցանկանում ենք Ձեզ, Վեհափառ Տեր, քաջառողջություն, արևշատություն, ուժ ու կորով՝ մեր Սուրբ Եկեղեցուն և ժողովրդին ծառայելու վսեմ գործում:

Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ,ԱԿԱԴԵՄԻԿՈՍ